

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

....Հոդված 124. Աշխատանքային հարաբերությունների կարգավորումը՝ կապված զինվորական ծառայության անցնելու հետ

....2. Զինվորական հաշվառման պարտականություններ կատարելու, գորակոչային տեղամասերի կցագրվելու և վարժական հավաքների կանչվելու ընթացքում աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են օրենքով սահմանված կարգով:

ՀՀ Օ Ր Ե Ն Ք Ը

ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

....Հոդված 4. Զինապարտության կատարման ապահովումը

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, անկախ կազմակերպական-իրավական ձևից գործատու կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների պաշտոնատար անձինք պարտավոր են՝

ա) ժամանակին և սահմանված ձևով վարել զինապարտների գրանցամատյանը, զինվորական հաշվառման ենթակա անձանց ցուցակները ներկայացնել նրանց հաշվառման (հաշվառում չունեցողներինը՝ փաստացի բնակության վայրի) զինվորական կոմիսարիատներ, ինչպես նաև տրամադրել հաշվառումից հանվելու, աշխատանքի (ուսումնական հաստատություն) ընդունվելու, տեղափոխվելու, ազատվելու (հեռացվելու) վերաբերյալ տվյալները.

բ) համապատասխան զինվորական կոմիսարիատի պահանջով զինապարտներին ծանուցել զինվորական կոմիսարիատ կանչվելու մասին.

գ) զինապարտներին ազատել աշխատանքից կամ արձակել ուսումից՝ զինվորական ծառայության կամ զինվորական կոմիսարիատի ծանուցագրում նշված անհրաժեշտ ժամանակով:

... **Հոդված 36.** Առաջին և երկրորդ կարգի պահեստագործ բաժանվում է տարիքային երեք խմբի՝

**առաջին խումբ՝ մինչև 35 տարեկան,
երկրորդ խումբ՝ 35-ից մինչև 45 տարեկան,
երրորդ խումբ՝ 45-ից մինչև 50 տարեկան:**

ՀՀ կառավարության
2018 թվականի նոյեմբերի 8-ի
N 1269-Ն որոշման

ՀՀ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Կ Ա Ր Գ

....15. Զինապարտների զինվորական հաշվառման լրիվությունն ապահովելու նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ գործատու կազմակերպություններն ու ուսումնական հաստատությունները վարում են աշխատող կամ սովորող, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները՝ նաև համայնքում հաշվառված զինապարտների վերաբերյալ գրանցամատյան (համաձայն ձև N 4), որում գրառվում է զինապարտի ազգանունը, անունը և հայրանունը, ծննդյան օրը, ամիսն ու տարեթիվը, բնակության վայրի հաշվառման հասցեն, զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատը: Գրանցամատյանը վարվում է փաստաթղթային և (կամ) էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև, ըստ վարող մարմնի հայեցողության, միաժամանակ 2 եղանակով: Փաստաթղթային եղանակով գրանցամատյանը վարվում է առանձին գրքով, որը գործավարության համար սահմանված կարգով կարվում և կնքվում է, իսկ էջերը համարակալվում են:

